ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/8» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտերի բացման նիստ

ք. Երևան 25 սեպտեմբերի 2019թ. Ժամը 14:00

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Է. Գյումրյան
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Շ. Հարությունյան, Հ. Մելիքյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Սերոբյան, Ա. Իսկանդարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ.Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին
8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

2.1 Սահմանված ժամկետում գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Էլ. փոստի հասցե
1	«Կոմպմարկետ» ՍՊԸ	info@comp.am, compyrvn@mail.ru
2	«ԱՄԲԱ ԳՐՈՒՊ-1» ՍՊԸ	Ambagroup1@mail.ru

3.Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

3.1 Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր), կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ և «ԱՄԲԱ ԳՐՈՒՊ-1» ՍՊԸ:

4.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

4.1 «Կոմպմարկետ» ՍՊԸ և «ԱՄԲԱ ԳՐՈՒՊ-1» ՍՊԸ մասնակիցները կազմել և ներկայացրել են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր:

5.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

5.1 Գնման առարկա է հանդիսանում ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար Համակարգիչների ձեռքբերումը, որը խմբավորված է 1 չափաբաժնում:

5.2 Պայմանագիրը կատարելու համար հրավերով սահմանված պահանջներին համապատասխան գնահատված մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

	Մասնակցի անվանում	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Քանակ
1	Համակարգիչ	Գնման առարկայի նախահաշվային արժեք 6 340 000 (ներառյալ ԱԱՀ)			20 հատ
1	«Կոմպմարկետ» ՍՊԸ	4 100 000	820 000	4 920 000	
2	«ԱՄԲԱ ԳՐՈՒՊ-1» ՍՊԸ	4 816 666	963 334	5 780 000	

«ԱՄԲԱ ԳՐՈՒՊ-1» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի հաշվարկում առկա է անհամապատասխանություն ավելացված արժեքի հարկի հաշվարկի մասով, հետևաբար, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, մասնակցի հայտը ենթակա է մերժման:

6.Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

6.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Կոմպմարկետ» ՍՊԸ մասնակցին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախա-պատվություն տալու սկզբունքով:

6.2 Էլեկտրոնային եղանակով ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

6.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկել ծանուցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցին, որպեսզի վերջինս հրավերով սահմանված կարգով և ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնի իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերով նախատեսված հավելված N 3 և հավելված N 3.1-ի:

7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:

7.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

8.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը և ՀՀ ՊԵԿ-ից Տեղեկատվության ստացման հաջորդող աշխատանքային օրը:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահող՝ _____ Է. Գյումրյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Շ. Հարությունյան

_____ Հ. Մելիքյան

_____ Ա. Սերոբյան

_____ Ա. Իսկանդարյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Բաղդասարյան